

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Մասաթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	1/12

Առարկան

««Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ»-ով /այսուհետ՝ Սակագներ/ սահմանվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Բանկ/ կողմից Հաշվի Օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով (ջնորհված «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության» կանոնների համաձայն) մատուցվող ծառայությունների սակագներն ու դրույքները, ինչպես նաև վերջիններիս հետ կապված հարաբերությունների կարգավորումը:

Կիրառման ոլորտը

Սակագները կիրառվում են Բանկի Հաշվապահական հաշվառման վարչության կողմից:

Առնչվող փաստաթղթեր

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ»

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Սակագների մասին կանոններ»

««Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ» /PR 72-07/

Բանկի Խորհրդի որոշումներ

Բանկի Տնօրինության որոշումներ

Գլխավոր գործադիր տնօրենի հրամաններ

Հապավումներ

ՀՕ - Հաշվի օպերատոր

ԿՇՀՀԱ - Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ

ԿՇ - Կարգավորվող շուկա

ՀԿԴ - «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սակագներում օգտագործվող հիմնական հասկացությունները
- 1.2. Սակագների ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը
- 1.3. Սակագների տարածելիության ոլորտը

ԲԱԺԻՆ 2. ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱԳՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔՆԵՐԸ

- 2.1. Հաշվետերերին մատուցվող հիմնական ծառայություններ

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Ամսաթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	2/12

- 2.1.1. Գրանցված սեփականատերերի արժեթղթերի հաշիվների պահպանման հետ կապված ծառայություններ
- 2.1.2. ԿՇ-ից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ
- 2.1.3. Արժեթղթերի գրավադրման, սառեցման, առևտրային արգելադրման, ինչպես նաև ձայնի իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններ
- 2.1.4. Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրում
- 2.1.5. Անվանատիրոջ հաշիվների բացման և պահպանման հետ կապված ծառայություններ

ԲԱԺԻՆ 3. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՆՈՒԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՅԴ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 3.1. Արժեթղթերի պահպանման ծառայություն
- 3.2. Ժողովներին հեռակա մասնակցության ապահովում
- 3.3. Արժեթղթերով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ
- 3.4. Դրամական միջոցներով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ
- 3.5. Հաշվետվությունների տրամադրում

ԲԱԺԻՆ 4. ՍԱԿԱԳՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 4.1. Սակագներում նշված սակագների և դրույքների վճարման կարգը, ժամկետները
- 4.2. Տույժերը և ծառայությունների կասեցումը

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բանկի կողմից ՀՕ-ի և ԿՇՀՀԱ-ի կարգավիճակներով մատուցվող ծառայություններն են՝ **Հիմնական ծառայությունները.**

- Արժեթղթերի պահառությունը;
- ԿՇ-ում կորպորատիվ արժեթղթերով գործարքների կնքման նպատակով հանձնարարականների կատարումը

1.1. Սակագներում օգտագործվող հիմնական հասկացությունները

1.1.1. Սակագներով կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1.1.1.1. «ՀՀ դրամ»՝ Հայաստանի Հանրապետության դրամ,

1.1.1.2. «Սակագներ և դրույքներ»՝ Սակագներով սահմանված և Բանկի կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարի չափ՝ արտահայտված համապատասխան ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով կամ բացարձակ արժեքով և արտահայտված ՀՀ դրամով:

1.1.1.3. Սակագներում օգտագործվող այլ հիմնական հասկացություններն ունեն ««Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգով» /PR 72-07/ սահմանված նշանակությունը:

1.2. Սակագների ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Ամսաթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	3/12

1.2.1. Սակագները հաստատվում, փոփոխվում և ուժը կորցրած են ճանաչվում Բանկի Տնօրինության կողմից և ուժի մեջ են մտնում Տնօրինության կողմից սահմանված ժամկետներում:

1.3. Սակագների տարածելիության ոլորտը

1.3.1. Սակագները տարածվում են այն հաշվետերերի և անձանց վրա, ովքեր օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով օգտվում են Սակագների հիմնական ծառայություններից:

1.3.2. Սակագները չեն տարածվում Բանկի կողմից թողարկած արժեթղթերով գործառնությունների վրա: Տվյալ գործառնությունները Բանկի կողմից իրականացվում են առանց սակագնի կիրառման:

2. ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՑՔՆԵՐԸ¹

	Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
2.1.	Հաշվետերերին մատուցվող հիմնական ծառայություններ		
2.1.1.	Գրանցված սեփականատերերի արժեթղթերի հաշիվների պահպանման հետ կապված ծառայություններ		
2.1.1.1.	Արժեթղթերի (փայերի) հաշվի բացում, փոփոխություն, պահպանում և փակում		
ա)	Արժեթղթերի հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
բ)	Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում		Անվճար
գ)	Արժեթղթերի (բացառությամբ ՀՀ ԿՇ-ում առևտրի թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի) հաշվի պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեք/ամսական	0.00075 %
դ)	Արժեթղթերի հաշվի փակում		Անվճար
2.1.2.	ԿՇ-ից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ		
2.1.2.1.	Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում ցանկացած հիմքով, ներառյալ «Ազատ առաքում» սկզբունքով ²		
ա)	Բաժնետոմսերի (փայերի) (FOP) փոխանցում	Գործարքի առարկա	մինչև 1 000 000

¹ Այս ծառայության դիմաց սակագնի հաշվարկումը սկսվում է ՀՕ-ի կողմից հաշվետիրոջ հաշվի վերաբացման կամ բացման պահից և հաշվարկվում է մինչև տվյալ հաշվի փակման օրը ներառյալ:

² Ներառում է բաժնետոմսերով առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը ՀԿԴ-ն չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին:

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Ամսաթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	4/12

		հանդիսացող արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք/վճարում է փոխանցող կողմը	ՀՀ դրամը / 1 000 ՀՀ դրամ 1 000 000-3 000 000 000 ՀՀ դրամը / 0.075% 3 000 000 000 ՀՀ դրամից ավելի դեպքում / 2 250 000 ՀՀ դրամ
2.1.2.2.	Պարտատոմսերի փոխանցում ցանկացած հիմքով ներառյալ «Ազատ առաքում» սկզբունքով ³		
ա)	Պարտատոմսերի (FOP) փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք/վճարում է փոխանցող կողմը	մինչև 2 000 000 ՀՀ դրամը / 1 000 ՀՀ դրամ 2 000 000-4 000 000 000 ՀՀ դրամը / 0.0075% 4 000 000 000 ՀՀ դրամից ավելի դեպքում / 300 000 ՀՀ դրամ
2.1.2.3.	Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում մեկ հաշվից մյուսին		
ա)	Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Հանձնարարագիր/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը (եթե երկու կողմերն էլ Բանկում ունեն բացված արժեթղթերի հաշիվ)	5 000 ՀՀ դրամ
2.1.2.4.	Պորտֆելի փոխանցում՝ մեկ ՀՕ-ի մոտ բացված հաշվետիրոջ հաշվից այլ ՀՕ-ի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա		

³ Ներառում է պարտատոմսերով առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը ՀԿԴ-ն չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում մեկ անձնական հաշվից մյուսին:

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Սմասթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	5/12

	ամբողջ մնացորդի փոխանցում		
ա)	Պորտֆելի փոխանցում	Հանձնարարագիր/վճարումը իրականացնում է փոխանցող կողմը	6 000 ՀՀ դրամ
2.1.2.5.	Բաժնետոմսերի փոխանցում "Առաքում վճարման դիմաց" սկզբունքով ցանկացած հիմքով		
ա)	Բաժնետոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 1 000 000 ՀՀ դրամ/ 2 000 ՀՀ դրամ 1 000 000-2 000 000 000 ՀՀ դրամ / 0.15% 2 000 000 000 ՀՀ դրամից ավելի դեպքում / 3 000 000 ՀՀ դրամ
2.1.2.6.	Պարտատոմսերի փոխանցում "Առաքում վճարման դիմաց" սկզբունքով ցանկացած հիմքով		
ա)	Պարտատոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը	Մինչև 10 000 000 ՀՀ դրամ / 2 000 ՀՀ դրամ 10 000 000-2 000 000 000 ՀՀ դրամ / 0.015% 2 000 000 000 ՀՀ դրամից ավելի դեպքում / 300 000 ՀՀ դրամ
2.1.2.7.	Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացում		
ա)	Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է գրավատուն	Մինչև 140 000 000 ՀՀ դրամ / 0.20% ՀՀ դրամ 140 000 000 ՀՀ դրամից ավելի դեպքում / 280 000 ՀՀ

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Ամսաթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	6/12

			դրամ
2.1.3.	Արժեթղթերի գրավադրման, սառեցման, առևտրային արգելադրման, ինչպես նաև ձայնի իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններ		
2.1.3.1.	Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ հաշվետիրոջ անձնական հաշվում արժեթղթերի գրավադրում		
ա)	Բաժնետոմսերի գրավադրում	Գրավի առարկա հանդիսացող բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է գրավատուն	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0.075 % 3 000 000 000 ՀՀ դրամից ավելի դեպքում / 2 250 000 ՀՀ դրամ
բ)	Պարտատոմսերի գրավադրում	Գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է գրավատուն	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը /0.015% 3 000 000 000 ՀՀ դրամից ավելի դեպքում /450 000 ՀՀ դրամ
2.1.3.2.	Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում		
ա)	Սառեցում	Սառեցված արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է հաշվետերը	մինչև 3 000 000 000 ՀՀ դրամը / 0.075% 3 000 000 000 ՀՀ դրամից ավելի դեպքում / 2 250 000 ՀՀ դրամ
2.1.3.3.	ԿՇ-ում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում		
ա)	Առևտրային արգելադրում		Անվճար
2.1.3.4.	Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար		
ա)	Քվեարկելու իրավունքի	Քվեարկելու	0.5 %

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Ամսաթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	7/12

	Ժամանակավոր սահմանափակում	իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	
2.1.3.5.	Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում		
ա)	Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում		- Անվճար
2.1.4.	Հաշվետիրոջը տեղեկությունների տրամադրում		
2.1.4.1.	Արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում		
ա)	Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում (այդ թվում՝ ըստ յուրաքանչյուր դասի (ռեեստրից քաղվածք))	Քաղվածք	1 000 ՀՀ դրամ
բ)	Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	Տեղեկանք	2 000 ՀՀ դրամ
2.1.4.2.	Հաշվետիրոջ հարցման հիման վրա այլ տեղեկությունների (բացառությամբ գործարքների վերաբերյալ տեղեկությունների հարցումների) վերաբերյալ ռեեստրից կամ անձնական հաշվից տեղեկանքի հիմքերով տրամադրում		
ա)	Էլեկտրոնային եղանակով	1 տեղեկանքը	5 000 ՀՀ դրամ
բ)	առձեռն		10 000 ՀՀ դրամ
2.1.5.	Անվանատիրոջ հաշիվների բացման և պահպանման հետ կապված ծառայություններ		
2.1.5.1.	ՀՕ չհանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և պահպանում		
ա)	Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	300 000 ՀՀ դրամ
բ)	Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեք/ամսական	Անվճար
գ)	Անվանատիրոջ հաշվի պահպանում		0.00075%

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Ամսաթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	8/12

2.1.5.2.	ՀՕ հանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և պահպանում		
ա)	Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
բ)	Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեք/ամսական	Անվճար
գ)	Անվանատիրոջ հաշվի պահպանում		0.00075 %

3. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՅԴ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Ծառայության անվանումը	Միավորը	Սակագինը
3.1.	Արժեթղթերի պահպանման ծառայություն		
3.1.1.	Բաժնային արժեթղթերի (այդ թվում՝ ֆոնդի փայերի) պահպանում	Մեփականատիրոջ (անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ/ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 30% հավելագին
3.1.2.	Պարտքային արժեթղթերի պահպանում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից թողարկված եվրոպարտատոմսերի)		
3.1.3.	Հայաստանի Հանրապետության անունից թողարկված եվրոպարտատոմսերի պահպանում		
3.2.	Ժողովներին հեռակա մասնակցության ապահովում		
3.2.1.	Ծանուցումների ստացում	Ըստ յուրաքանչյուր ժողովի	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 30% հավելագին
3.2.2.	Օրակարգի ստացում		
3.2.3.	Մուտքի քարտի պատվիրում		
3.2.4.	Քվեարկության հանձնարարական կատարում		
3.3.	Արժեթղթերով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ ⁴		
3.3.1.	Պարտքային, բաժնային արժեթղթերով	Ըստ յուրաքանչյուր	Կենտրոնական

⁴ Վերջնահաշվարկի ենթակա, սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար:

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Ամսաթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	9/12

	և ֆոնդի փայերով վերջնահաշվարկի հանձնարարականի կատարում	հանձնարարականի	դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից
3.3.2.	Միսլ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 30% հավելագին
3.3.3.	Արժեթղթերի ֆիզիկական առաքման կամ ստացման հետ կապված ծախսեր (ներառյալ ապահովագրությունը)	Ըստ յուրաքանչյուր դեպքի	
3.3.4.	Վերջնահաշվարկի խմբային հանձնարարականի (group matching) կատարում	Ըստ յուրաքանչյուր գործարքի	
3.4.	Դրամական միջոցներով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ		
3.4.1.	Դրամական միջոցների մուտքագրման և էլքագրման հանձնարարականի կատարում (ներառյալ preadvice հանձնարարականները)	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից
3.4.2.	Դրամական միջոցներով գործառնություններ առանց հանձնարարականի	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 30% հավելագին
3.4.3.	Միսլ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	
3.5.	Հաշվետվությունների տրամադրում		Կենտրոնական դեպոզիտարիային օտարերկրյա պահառու կողմից
3.5.1.	Կորպորատիվ գործողությունների ծանուցում	Ըստ յուրաքանչյուր ծանուցման	հրապարակված սակագին (ներառյալ հարկերը) + 30% հավելագին
3.5.2.	Կորպորատիվ գործողությունների հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
3.5.3.	Ամսական ստացվելիք տոկոսագումարների տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
3.5.4.	Հաշվում առկա արժեթղթերի վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
3.5.5.	Դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
3.5.6.	Դրամական միջոցների վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
3.5.7.	Գործառնությունների վերաբերյալ տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
3.5.8.	Սպասվող գործառնությունների վերաբերյալ տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	<i>Ամսաթիվ 18.12.2017 թ.</i>	<i>Խմբագրություն 2</i>	<i>10/12</i>

3.5.9.	Վերջնահաշվարկի հաստատման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
3.5.10.	Արժեթղթերով վարկավորման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
3.5.11.	Կորպորատիվ գործողությունների ընդհանրական հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
3.5.12.	Հաշվում առկա արժեթղթերի բացվածքի տրամադրում ըստ շուկաների	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
3.5.13.	Հաշվետվությունների ուղարկում փոստով կամ էլ.փոստով	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
3.5.14.	Հանձնարարականի հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	
3.5.15.	Վերջնահաշվարկի հանձնարարականի կարգավիճակի հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	
3.5.16.	Հաշվից ելքագրման կամ հաշվին մուտքագրման հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	

4. ՍԱԿԱԳՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Սակագներում նշված սակագների և դրույքների վճարման կարգը, ժամկետները

4.1.1. Սակագներով սահմանված ծառայությունների դիմաց վճարումը իրականացվում է ՀՀ դրամով:

4.1.2. Սակագներով նախատեսված այն սակագներն ու դրույքները, որոնք չեն ներառում ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), ենթակա են ԱԱՀ-ով հարկման, եթե ՀՀ օրենսդրությամբ դրանք ազատված չեն ԱԱՀ-ից: Այն դեպքում, երբ Սակագներին համապատասխան հաշվարկված գումարները՝ ԱԱՀ-ն ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և նաև որոշակի լումաներից, ապա լումաները կլորացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:

4.1.3. Եթե ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով կամ դրույքով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ Հայաստանի կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:

4.1.4. Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է անկանխիկ ձևով (փոխանցումով) մինչև օրենքով, այլ իրավական ակտերով և Սակագներով սահմանված կարգով ծառայություններից օգտվելու համար համապատասխան փաստաթղթերը Բանկ ներկայացնելը (հանձնարարագիրը կամ հարցումը էլեկտրոնային ձևով փոխանցելուց առաջ), բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվել են վճարման երաշխիքներ, վճարման

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Ամսաթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	11/12

երաշխիքն ամրագրված է վճարողի և Բանկի միջև կնքված պայմանագրով: Ընդ որում, պայմանագրային դրույթներով ամրագրված երաշխիքները հիմք են որպեսզի վճարողը Բանկի ծառայություններից օգտվելու դիմաց վճարումներն իրականացնի Բանկի հետ կնքած համապատասխան պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

4.1.5. Եթե հաշվետիրոջ հաշվում հաշվառվում են բաժնետոմսեր (փայեր), Բանկի հետ պահառության պայմանագիր կնքելիս հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 2.1.1.1. կետով սահմանված համապատասխան սակագնի 12 ամսվա գումարի չափով: Կանխավճարի գումարը հաշվարկվում է պահառության պայմանագրի կնքման պահին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեքի հիման վրա: Յուրաքանչյուր հաջորդ 12 ամիսների համար հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 2.1.1.1. կետով սահմանված համապատասխան սակագնի 12 ամսվա գումարի չափով՝ ոչ ուշ, քան առաջին կանխավճարի կատարման պահից հաշվարկված 9-րդ ամսում: Կանխավճարի գումարը հաշվարկվում է նշված ժամկետի դրությամբ հաշվետիրոջ հաշվում առկա բաժնետոմսերի (փայերի) մնացորդների անվանական արժեքի հիման վրա:

4.1.6. Եթե հաշվետիրոջ հաշվում հաշվառվում են այլ արժեթղթեր, այդ թվում՝ պարտատոմսեր, ապա Բանկի հետ պահառության պայմանագիր կնքելիս հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար մինչև տվյալ արժեթղթերի, այդ թվում՝ պարտատոմսերի մարումն ընկած ժամանակահատվածի գումարի չափով, եթե մարման ժամկետը չի գերազանցում 12 ամիսը: Այլ արժեթղթերի, այդ թվում՝ պարտատոմսերի մարման ժամկետը 12 ամիսը գերազանցելու դեպքում Բանկի հետ պահառության պայմանագիր կնքելիս հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 2.1.1.1. կետով սահմանված համապատասխան սակագնի 12 ամսվա գումարի չափով: Յուրաքանչյուր հաջորդ 12 ամիսների կամ մինչև մարումն ընկած ժամանակահատվածի համար (եթե մինչև մարումն ընկած ժամանակահատվածը 12 ամսից փոքր է) հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 2.1.1.1. կետով սահմանված համապատասխան սակագնի 12 ամսվա կամ մինչև մարումն ընկած ժամանակահատվածի (եթե մինչև մարումն ընկած ժամանակահատվածը 12 ամսից փոքր է) ամիսների գումարի չափով՝ ոչ ուշ, քան առաջին կանխավճարի կատարման պահից հաշվարկված 9-րդ ամսում: Կանխավճարի գումարը հաշվարկվում է նշված ժամկետի դրությամբ հաշվետիրոջ հաշվում առկա այլ արժեթղթերի, այդ թվում՝ պարտատոմսերի մնացորդների անվանական արժեքի հիման վրա:

4.1.7. Յուրաքանչյուր ամսվա վերջին բանկային օրվա դրությամբ Բանկն իրականացնում է վերահաշվարկ: Եթե հաշվետիրոջ կանխավճարի գումարը ավելի փոքր է, քան 2.1.1.1. կետով սահմանված համապատասխան սակագնի ամսական գումարը, հաշվետերը պարտավոր է կատարել կանխավճար 2.1.1.1. կետով սահմանված համապատասխան սակագնի 12 ամսվա գումարի չափով: Կանխավճարի գումարը հաշվարկվում է նշված ժամկետի դրությամբ հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդների անվանական արժեքի հիման վրա (2.1.1.1. կետով նախատեսված սակագնի համար):

4.1.8. Բանկն իրավունք ունի վերսկսել հաշվետիրոջը պահառության ծառայությունների մատուցումը: Եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է, ապա Բանկին վճարման ենթակա գումարը հաշվարկվում է Գ3 = ԺՊ+ՊՎՎ բանաձևով (Գ3), որտեղ՝ ՊՎՎ - պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ ՀՂxO/365, ընդ որում՝

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	PL 74-07	Կոնֆիդենցիալ	
	Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ	Սմասթիվ 18.12.2017 թ.	Խմբագրություն 2	12/12

ՀԴ-ն հիմնական դրույքաչափն է, որը կազմում է վերսկսման պահին հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.02%, Օ-ն կասեցման օրերի քանակն է, ԺՊ-ն՝ կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարն է՝ գումարած հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար: Ընդ որում՝ 4.1.8. կետով վճարման ենթակա գումարի մասնակի վճարման դեպքում առաջին հերթին մարման են ենթակա ժամկետանց պարտավորությունների գումարը (ԺՊ), այնուհետ՝ պայմանագրի վերսկսման վճարը (ՊՎՎ):

4.2. Տույժերը և ծառայությունների կասեցումը

4.2.1. Հաշվետիրոջ կողմից Սակագներով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա ժամկետներում համապատասխան սակագների և դրույքների գումարների վճարման չկատարման պարագայում Բանկը հաշվետիրոջ նկատմամբ հաշվարկում է տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0.13 %-ի չափով:

4.2.1. Բանկը կասեցնում է Սակագներով նախատեսված ծառայությունների մատուցումն իր կողմից սպասարկվող հաշվետերերին, եթե վերջիններս Բանկի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց վճարման երեք ամսից ավելի ժամկետանց պարտավորություն:

4.2.2. կետի դրույքների կիրառման դեպքում Բանկը 1-օրյա ժամկետում այդ մասին հայտնում է ՀԿԴ-ին:

4.2.3. կետի դրույքների կիրառման դեպքում կասեցվում է նաև ծառայությունների դիմաց գանձվող վճարների և տույժերի հաշվարկը:

4.2.4. կետով նախատեսված կասեցման դեպքում արժեթղթերի հաշվետերերի հաշիվների հետ գործողություններ կատարելու վերաբերյալ Բանկին հանձնարարականներ տալու իրավասություն ունեն միայն ՀՀ կենտրոնական բանկը, Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատարանները, հետաքննության և նախաքննության մարմինները՝ ՀՀ Քաղաքացիական և Քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ու դեպքերում և նոտարները: